ԱՆՈՒՇ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ԱՄԲՈԽԻ ԼԻԴԵՐՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքական հոգեբանությունը առանձնացնում է մարդկանց վարքի երկու հիմնական ձև: Մի կողմից դա ամբողջությամբ կամ հիմնականում անհատի սեփական կամքից և գիտակցությունից կախված վարքագիծն է՝ ինքնակամ, գիտակցված, ռացիոնալ վարքագիծը: Մյուս կողմից այն վարքագիծը, որը ոչ թե կախված է անմիջականորեն անհատներից, այլ այն ձևերից, որոնցով անհատի ազատ կամքի կամ ցանկության դրսևորումները սահմանափակվում են այս կամ այն չափով այլ մարդկանց կամ հանգամանքների ազդեցությանբ: Վերջինիս դեպքում երբեմն ընդունված է խոսել պարտադրված (արտաքին ճնշմամբ պայմանավորված), իսկ ավելի հաճախ տարերային վարքի մասին:

Ամբոխի վարքի յուրահատկությունները և մասնավորապես իր անդամների վրա նրա ազդեցությունը մեծապես կախված է ամբոխի լիդերի անհատականությունից, նրա տեսակից և հոգեբանական որակներից: Դրանք միանշանակ յուրահատուկ խառնվածքի տեր մարդիկ են: Լիդերությունը ամբոխում էապես տարբերվում է լիդերությունից խմբում և պահանջում է բոլորովին այլ որակներ: Գ. Լեբոնը անվանել է նրանց «առաքյալներ» համոզված այն բանում, որ նրանք մարդկանց տանում են դեպի նոր հավատ[1]: Գ. Տարդը գտնում էր, որ ամբոխը ինքն է իր համար լիդերներ գտնում. այն կարծես իր մեջից է դուրս հանում նրանց:

Համաձայն հոգեվերլուծության ամբոխը «հարգում է ուժը, իսկ բարությամբ, որը ամբոխին ներկայանում է ընդամենը որպես թուլության տարատեսակ, դեկավարվում է ընդամենը նրա անենշան մասը: Իր հերոսից նա ակնկալում է ուժ, բռնություն: Ամբոխը ցանկանում է, որ իրեն իշխեն և ենթարկեն, ցանկանում է վախենալ իր տիրոջից»[2]: Չնայած որ այս դեպքում ամբոխի պահանջը համընկնում է լիդերի ցանկության հետ՝ այդուհանդերձ լիդերը պետք է խորապես համակված լինի իր հավատով և զգաստարով, որպեսզի կարողանա արթնացնել այդ նույն հավատը ամբոխի ներսում: Ըստ ֆրանսիացի սոցիալական հոգեբան Ա. Մոսկովիչի ամբոխը աստվածացնում և երկրպագում է իր ընտրյալ լիդերներին վերագրելով նրանց

[1] Лебон Г. Психология народов и масс. - Макет, СПБ, 1995.
[2] Фрейд З. Массовая психология и анализ человеческого «Я» // Фрейд З. Избранное Т. 1. - Лондон: Academia, 1959.

երբեմն նույնիսկ գոյություն չունեցող հատկանիշներ, օժտելով նրանց ամենակարող և ամենագետ լինելու ունակությամբ:

Ամբոխը ակնածանքով ծառայում է իր ղեկավարներին: Դնելով նրանց կիսաստվածների պատվանդանին՝ ամբոխը ստեղծում է լիդերի բացարձակ պաշտպանվածության համակարգ քննադատությունից կամ ցանկացած դիմադրությունից: Այսպիսով, մեծամասամբ ամբոխին ղեկավարում է ոչ թե սովորական լիդերը, այլ ֆանատը: Այպիսի ֆանատ էր Հիտլերը, որը կարողացավ իր ուժին ենթարկել գերմանացիների բազմամիլիոն ազգին: Գերմանացիները պատրաստ էին աղոթել նրան, ինչպես աստծուն: Այս սկզբունքները ոչ պակաս հաջողությամբ կիրառվել են և նրանցից առաջ, և նույնիսկ մինչ օրս: Տարբերությունը միայն նրանում, որ ժամանակակից աշխարհում նորագույն տեխնոլոգիաները թույլ են տալիս դա անել շատ ավելի արդյունավետորեն՝ ազդելով մարդկանց շատ ավելի մեծ քանակության վրա՝ դարձյալ ինչպես առաջ ստիպելով կատարել մեկ մարդու լիդերի կամքը:

Քանի որ համակարգված ամբոխի մեծ մասը նմանվում է իր առաջնորդի էությանը, կարեւոր է ճանաչել հենց իրեն[3] առաջնորդին: Առաջնորդի էությունն ըստ Տարդի ներկայացման առավել լիարժեքորեն հասկանալու համար հարկ է կրկին անդրադառնալ Լեբոնի եւ Տարդի տեսությունների միջեւ գոյություն ունեցող արմատական տարբերությանը: Ըստ Լեբոնի[3] զանգվածներն իրենց համարում են որպես հասարակական կյանքի բնականոն ընթացքի շեղման եւ թուլացման արգասիք: «Ամբոխի ուժն ուղղված է լոկ ավերումներ անելուն...»[3]: Նրանցում ձեւավորվում է ինչ-որ «տարրական էներգիա», որի փոխակերպումների արդյունքում առաջանում են հասարակական եւ քաղաքական բոլոր հաստատությունները: Ս. Մոսկովիչին նշում է, որ եթե առաջ ասվում էր. «Սկզբում մարդիկ ձեւավորեցին հասարակություն, որից հետո ի հայտ եկան զանգվածները», ապա այժմ պետք է ասել. «Սկզբում կային մարդկային զանգվածներ, որից հետո նրանք հասարակություն ձեւավորեցին»[4]: Սա է Տարդի եւ Լեբոնի տեսությունների հիմնական տարբերությունը: Սա էլ դառնում է հիմնական դժվարության պատճառը: Բանն այն է, որ Լեբոնի հավաստմամբ՝ ամբոխներն ընդունակ չեն ստեղծագործելու, նախաձեռնելու. երբեք չեն եղել արվեստի, գիտական կամ քաղաքական հեղաշրջումների ղեկին: Ինչպե±ս կարող էին նոր ուղղության հիմք դնել, եթե մեկտեղ հավաքվածների մտածողության ընդունակությունը նվազում եւ իրականության զգացումը հոդս է ցնդում: Մինչդեռ զարգանում են հասարակական տարաբնույթ հաստատություններ, ծաղկում են

---

[3] Психология масс, Райгородский Д. Я. – Самара, Изд. Дом «Бахрах-М» 2001.

[4] Ольшанский Д.В., Массовые настроения в политике. – М., 1995.

գիտությունն ու արվեստը, կատարելագործվում է կիրառական տեխնիկան, մշակվում են արտադրության ու հաղորդակցության զանազան միջոցներ, եւ այս ամենը փոխում է հասարակության դեմքը: Ուստի եւ հայտնվում ենք ամբոխի հոգեբանության արմատական պարադոքսի (հարակարծության) առջեւ: Ելքը գտնելու համար, սակայն, հասարակությունը չի կարող հրաժարվել իր սկզբունքից. ամբոխի մեջ համախմբված սուբյեկտներն այնքան բանական ու ստեղծագործ չեն, որքան յուրաքանչյուրն առանձին-առանձին: Տարդն այս դեպքում ունի այլընտրանքային սոսկ մեկ լուծում, որն անհապաղ ընդունվում է: Ասում է, թե ամբոխի շարքերում լինում են անհատներ, ովքեր իրենց շուրջն են հավաքում մյուսներին, իրենց ետեւից տանում եւ դեկավարում: Դրանք հոգեւոր եւ քաղաքական գործիչներ են, գիտնականներ եւ այլն: Նրանք կանգնած են պատմական բոլոր շրջադարձերի, նորամուծությունների ու զարգացումների ակունքների մոտ: Նրանցից ներշնչված եւ նրանց ընդօրինակել ցանկանալով[8] շատերն են հետեւում այս առաջնորդներին: Որքան այս ականավոր անհատներն իրենց բանականությամբ ու մտքով ամբոխից առաջ են անցնում, այնքան այդ ամբոխի շարքերում ի հայտ են գալիս իրենց ընդօրինակող անհատներ, ովքեր ժամանակի ընթացքում գալիս են փոխարինելու անցյալ առաջնորդներին: Այս բարձունքները հաղթահարելով[8] մարդկությունն առաջընթաց է ապրում եւ բարեկարգվում, ասում է Մոսկովիչին[8] վերլուծելով Տարդի աշխատությունները:

Մոսկովիչին գտնում է, որ այս պարադոքսին տրված Տարդի լուծումն իսկապես թույլ է[5]: Այս անելանելի դրությունից դուրս գալու միակ միջոցը, որով կպարզենք, թե ովքե±ր են այս բացառիկ անհատականությունները եւ որտեղից է նրանց ամենակարող ուժը, ինքնին պարադոքսից հրաժարվելն է, որը կբերի հետեւյալ ենթադրությունների.

- ամբոխի հոգեբանության կենտրոնը զանգվածներից անցնում է առաջնորդին: Զանգվածներն իրենց առաջնորդին նմանվում են այնքանով, որքանով առաջնորդին հաջողվում է ազդեցություն ունենալ նրանց վրա.

- նմանակումը, որ ներշնչման ձեւ է, դառնում է հասարակական կյանքի գլխավոր շարժիչ ուժը: Ենթադրվում է, որ հենց նմանակմամբ կարելի է բացատրել առաջնորդի ազդեցությունը, որի արդյունքում նմանվում են մարդկանց միտքն ու վարքը, հույզն ու համոզմունքը: Այսինքն[8] նմանակմամբ են համակերպվում ընդհանուր կենսակերպին.

- Տարդը հաղորդակցությունը դիտում է իբրեւ ներշնչման միջոց, լրագրողի գործունեությունը՝ հիպնոս անողի ներազդման տեսակ:

---

[5] Психология масс. Райгородский Д. Я – Самара, Изд. Дом «Бахрах-М» 2001.

Ղեկավարն ամբոխի հայելին է. ամբոխն իր ինքնությունը ճանաչում է ղեկավարի կերպարի մեջ: Ընդունում է, որ ղեկավարն իր հավաքական համոզմունքների կրողն է, հեղինակությունը: Նրանով հիանալով՝ հիանում է ինքն իրենով: «Երբ ամբոխը հիանում է իր առաջնորդով, - նշում է Տարդը, - երբ բանակը հիանում է իր զեներալով, նշանակում է հիանում է ինքն իրենով, իրեն վերագրում այն պատվավոր համբավը, ինչն այդ մարդը կարծում է, թե իրենն է»[6]: Հիացի՞ր ինքդ քեզնով, եւ քեզնով կհիանա ամբոխը. առաջնորդին մոտավորապես այսպիսի խորհուրդ է տալիս Տարդը: Այսպիսով[8] նմանակելով իր առաջնորդին՝ ամբոխն ինքն իրեն սկսում է հարգել, ամրապնդել իր առցիալական «ես»-ը:

· Այսպիսով, Տարդն ընթերցողի ուշադրությունը բերում է այն բանի վրա, որ հանդիսատեսն արտացոլում է ստեղծագործողի հանճարը, մինչդեռ ամբոխն արտահայտում է իր մշակույթի, ազգային ինքնության լոկ հավաքական, չգիտակցված կողմը:

Չինական մի ասացվածք կա. եթե առյուծն է տանում հիսուն ոչխար, ուրեմն իրականում հիսուն առյուծներ կան, իսկ եթե ոչխարն է հիսուն առյուծ տանում, ուրեմն իրականում հիսուն ոչխարներ կան: Այսինքն՝ խիստ կարեւոր է, թե երկիրն ով է առաջնորդում:

Ըստ Տարդի՝ առաջնորդը գյուտարար է: Եթե նրան հաջողվում է գրավել եւ հրապուրել զանգվածներին, ապա միայն յուրահատուկ եւ արտասովոր արարքով, որի հիման վրա իր հեղինակությունն է կառուցում: Դրանով հետաքրքրում է բոլոր նրանց, ովքեր ցանկանում են հետեւել եւ նմանվել նրան: Բոլորս էլ մեկին նմանվելու կարիք ունենք: Սկսելով իշխել մեր «ես»-ի վրա՝ առաջնորդն ապա անցնում է այդ «ես»-ի անհատականության ոչնչացմանը: Քանի որ նա նույն տեղն է զբաղեցնում հազարավոր, անգամ միլիոնավոր, մարդկանց հոգեկան աշխարհում, ապա նրանց քայլերի, հույզերի եւ մտքերի նմանությունը ծնում է կոլեկտիվ գիտակցության, խմբային ոգու, ընդհանուր զաղափարախոսության տպավորություն: Իսկապես, որ կարելի է խոսել զանգվածների կրկնօրինակման մասին, որոնք վերարտադրում են մեկ անհատի[9] առաջնորդի գիտակցությունը, ոգին ու հայացքները: Մինչդեռ Լեբոնը կարծում է, թե առաջնորդի մտավոր ունակությունները խիստ սահմանափակ են, որը, սակայն, փոխհատուցվում է նրա կամքի ուժով եւ համարձակությամբ:

Թե՛ Լեբոնը, թե՛ Տարդն այն կարծիքին են, որ առաջնորդը ձգտում է մարդկանց վրա իշխել այնքանով, որքանով իր վրա իշխում է զաղափարը. սա իսկական իշխանության առաջին օղակն է: Որքան հսկայական եւ բացառիկ է զաղափարը, այնքան մեծ են մարդկանց առաջնորդելու նրա

---

[6] Психология масс, Райгородский Д. Я. – Самара, Изд. Дом «Бахрах-М» 2001.

ձգտումները: Այդ գաղափարն ուրիշների նկատմամբ նրան առավելություն է տալիս, հատկապես այն ժամանակ, երբ մարդիկ վստահության եւ հույսի կարիք ունեն: Դեռեւս Լեբոնն այն ժամանակ գրել է. «Հավատացյալների, առաջյալների ու առաջնորդների, այսինքն՝ համոզմունքներ ունեցող մարդկանց ուժն անկասկած ուրիշ է, ավելին, քան հոռետեսների, քննադատների եւ անտարբեր մարդկանց ուժը: Սակայն չմոռանանք, որ ամբոխն այսօր այնքան ուժ ունի, որ եթե հաջողվեր հեղինակություն եւ ազդեցություն ձեռք բերել, ապա կարող էր վերածվել այնպիսի բոնակալի, որին ամեն ինչ իսկույն պիտի ենթարկվեր»[7]:

Ահա թե ինչու առաջնորդի հոգեբանական հատկանիշները նման են գյուտարարի՝ ուժեղ եւ ինքնուրույն մարդու հատկանիշներին, որ վկայում են նրա նպատակասլացության մասին. մի բան, որ բնորոշ է մեկ սեւեռուն միտք ունեցող եւ դրանով իսկ գերված մարդուն, այսինքն՝ պայծառատեսին, համառին: Սրա մասին այսպես է գրում Տարդը. «Մեկի ազդեցությունը մյուսի վրա, ինչպես գիտենք, սոցիալական տարրական երեւույթ է եւ ոչնչով, բացի իր ընդգրկմամբ, չի տարբերվում իր օբյեկտի վրա ունեցած հիպնոս անտի ազդեցությունից: Նմանակողների ամբոխն իր պասիվությամբ, դյուրահավատությամբ ու հնազանդությամբ ինչ-որ տեղ նման է լուսնոտի, մինչդեռ գյուտարարը, նախաձեռնողն իր իսկ հանդեպ տածած անխոով հավատով, որի վրա շրջապատի տարակուսանքը հետք չի կարող թողնել, ինչ-որ տեղ նման է խելագարի: Ուրեմն, կհարցնեք, ստացվում է, որ խելագարները ղեկավարում են լուսնոտների: Երկու կողմերն էլ ձգտում են տրամաբանական իդեալի եւ, ըստ երեւույթին, աշխատանքն իրար մեջ բաժանում, քանի որ մի կողմի անմտությունը նպաստում է ընդհանուր հավատի պահպանմանն ու հաստատմանը, իսկ մյուս կողմի համարձակությունը՝ նույն հավատի խորացմանն ու մեծացմանը»[8]:

Տարդը գրում է, որ առաջնորդ լինելու, վստահություն ներշնչելու եւ տպավորություն ստեղծելու մի քանի ձեւեր կան: Նախ «կարելի է դրան հասնել շրջապատող մարդկանց մեջ, հնարավոր է նաեւ հեռավոր համայնքներում, ինչը պակաս կարեւոր չէ: Հեռավորության վրա ազդեցությունն այնպիսին է, որն անմիջական շրջապատում այն ազդեցությունը չէր թողնի, ինչը երբեք չի լինում իսկական հիպնոսի դեպքերում: Սա իմիջիայլոց հուշում է, որ պետք չէ մեզ հետաքրքրող թեման բացարձակորեն համեմատել հիպնոսի հետ[9]»: Նման դեպքերում ստեղծագործությունն արարչից ավելի հմայիչ է լինում: Ապա «մոտ, թե հեռու. մարդն ուրիշի վրա

---

[7] Психология масс, Райгородский Д. Я. – Самара, Изд. Дом «Бахрах-М» 2001.

[8] Ольшанский Д.В., Массовые настроения в политике. – М., 1995.

[9] Там же, с. 188.

ազդեցություն է թողնում կամ մտքի բացառիկ զարգացմամբ կամ միայն համոզմունքով, որքան էլ բնավորությունը հարաբերականորեն թույլ մնա, կամ սեփական արժանապատվության զգացումով, որն իրեն դարձնում է առաքյալ, կամ ստեղծագործ երեւակայությամբ»: Այսպիսով՝ Տարդն առանձնացնում է ազդեցության չորս հիմնական տեսակ. երկաթի պես կուտ կամքի ուժը, արծվի հայացքի պես սուր հայացքը եւ ուժգին հավատը, հարուստ երեւակայությունը, անթաքույց հպարտությունը: Իսկ Լեբոնն իր հերթին խոսում է միայն առաջնորդի հմայքի մասին:

Ըստ Տարդի՝ հեռավորության վրա հատկապես ազդում է առաջնորդի միտքն ու երեւակայությունը, իսկ անմիջական շրջապատի մարդկանց վրա՝ վճռականությունը՝ անգամ զազանային վճռականությունը, խոր համոզմունքը՝ անգամ մոլազար համոզվածությունը, հպարտությունը՝ անգամ խելագարության աստիճանի: Իսկ երբ խոսքն ամբոխի մասին է, ապա հենց մոտ մարդկանց վրա ազդող ուժերն են գործում իրենց լարումով, հախուռն ու անպարկեշտ թափով:

Հետեւաբար տեսնում ենք, որ Լեբոնն ու Տարդը համակարծիք են միայն խնդրի սահմանման հարցում, բայց ոչ լուծման մոտեցումներում: Տարդը հավատում է մտավոր զարգացմանը, գտնում, որ գալիք դարաշրջանը լինելու է ոչ թե ամբոխների տարածման ժամանակաշրջան, այլ զարգացած, քաղաքաբնակ հանրության, զանգվածային լրատվական միջոցներով համակցված մարդկանց դար: Տարդը տեսնում է ամբոխի՝ անմիջականորեն միմյանց վրա ազդեցություն ունեցող մարդկանց զանգվածի, միայն բացասական կողմերը, ընդգծում նրա ոչ տրամաբանական, ոչ կառուցողական վարքը: Լեբոնն ամբոխը որակում է որպես անցյալի հասարակական խումբ, իսկ՝ապագան զարգացած հասարակությանն է: Լեբոնն «ամբոխին» տալիս է չափից ավելի լայն սահմանում՝ նրանում ընդգրկելով ամեն տեսակի խումբ: Մյուս կողմից Տարդն առանձնացնում է արհեստական եւ բնական ծագում ունեցող ամբոխների տեսակներ, որոնց տարբերությունը կազմակերպվածության առկայությունն է կամ բացակայությունը: Կապի ամեն տեսակին համապատասխանում է հանրության որեւէ տեսակ. բանավոր խոսքով փոխանցվող, ավանդական ձեւին՝ ամբոխը, արդի լրատվամիջոցներին, որոնք սկիզբ են առնում տպագիր լրագրից՝ հանրությունը: Ամբոխին եւ հանրությանն էլ համապատասխանում է առաջնորդի յուրահատուկ տեսակ: Մամուլն իր սեփական առաջնորդին է ստեղծել՝ հրապարակախոսին: Առաջնորդը, հետայսու, գյուտարար է, ստեղծագործող, որ զանգվածներին հարստացնում է իր ինչ-ինչ արտաառոց արարքով: Նա օժտված է ուժեղ կամքով, արծվային սուր հայացքով, հարուստ երեւակայությամբ, անզուսպ հպարտությամբ: Առաջնորդն ամբոխի ինքնատիպ հայելին է, որ զանգվածների մեջ վերարտադրում է իր գիտակցության, ոգու

եւ գաղափարների կրկնօրինակները: Առաջնորդի վերաբերյալ Լեբոնի եւ Տարդի տեսությունների ընդհանրությունն այն է, որ երկուսն էլ գտնում են, որ ամբոխի վրա առաջնորդն ազդում է հիպնոսի միջոցով. այս գաղափարը բավական լայն տարածում գտավ XIX դարի վերջին: Առաջնորդի բնավորության ամենաբնորոշ գիծը նրա «խելակորույս հավատն» է: Այսպիսով՝ առաջնորդն ամբոխի տերն է, իսկ տիրոջ տերը՝ ինչ-որ մոլի գաղափարի հանդեպ խելակորույս հավատը:

Դասական վիճաբանություն է. ուշադրություն է ավելի կարեւոր. զանգվածները, թեւ դրանց առաջնորդները: Պատմությունը կերտում են ոչ թե զանգվածները, այլ առաջնորդները: Ուրիշ բան է, որ պետք է ինչ-որ զանգված ձեւավորել, որ առաջ գնա, սակայն առաջնորդի դերն այս առումով բացառիկ է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Психология масс, Райгородский Д. Я. – Самара, Изд. Дом «Бахрах-М» 2001.
2. Лебон Г. Психология народов и масс. - Москва, Изд-во Терра-Книжный клуб, 2008
3. Московичи С. Век толп. М., 1996.
4. Ольшанский Д.В., Массовые настроения в политике. – М., 1995.
5. Ольшанский Д.В., Психология масс. — СПб.: Питер, 2002.
6. Фрейд З. Массовая психология и анализ человеческого «Я» // Фрейд З. Избранное. — Т. 1. — Лондон: Academia, 1959.

ОСОБЕННОСТИ ЛИДЕРОВ

Статья рассматривает коренное отличие, существующее между теориями Лебона и Тарда. В концепции Лебона массы обнаруживали себя как продукт распада и ослабления нормальных рамок общественной жизни. "Сила толпы направлена лишь к разрушению. Если здание какой-нибудь цивилизации подточено, то всегда толпа вызывает его падение", - утверждал Лебон. Отныне же они образуют некую "элементарную энергию", из которой посредством превращений возникают все общественные и политические институты. С. Московичи замечает, что раньше говорилось: "Вначале люди создали общество, а затем появились массы", а теперь нужно сказать: "Вначале люди существовали в массе, а затем они создали общество". В этом состоит значительное отличие Тарда от Лебона.